ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1112/ 18371-16

01.03.2016թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ Հ/Կ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
հասցե՝ ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ս.թ. փետրվարի 23-ին ՀՀ ԱԳՆ ուղղված Ձեր հարցման՝ հայտնում ենք.

- 2016թ. հունվարի 1-ից փետրվարի 25-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱԳՆ-ն, ընդհանուր առմամբ, ստացել է 122 հարցում, որոնցից 97-ը՝ ԱԳՆ թեժ գծի, 9-ը՝ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչության էլեկտրոնային հասցեի եւ 16-ը՝ ԱԳՆ ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով:

- Գրավոր պատասխան է տրվել հարցումներից 84-ին, բանավոր՝ 2-ին, վերահասցեագրվել՝ 3-ը: Հարցման մերժման դեպքեր չեն եղել:

- ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքի գլխավոր էջում զետեղված է «Թեժ Գիծ» բաժինը, որը հնարավորություն է ընձեռնում դիմողներին հարցներն ուղարկել առցանց՝ http://mfa.am/hy/: Պաշտոնական կայքի Տեղեկատվություն բաժնում ներկայացված է նաեւ տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձեւը՝ http://mfa.am/hy/inquiry/:

- Պաշտոնական կայք-էջում «Հաճախակի տրվող հարցեր» բաժնի առկայության վերաբերյալ ցանկանում ենք տեղեկացնել, որ վերոնշյալ բաժինը դեռեւս գտնվում է մշակման փուլում եւ կայքի կառուցվածքում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո անմիջապես կիրապարակվի պաշտոնական կայք-էջի համապատասխան հատվածում:

Mar 1 2016 3:18 PM

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Աննա Նաղդալյան
հեռ. 060 620 201